ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 173 –Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության . . օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է**.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ. Հունանյան		
Ն. Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		
Է. Մկրտչյան		

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.

Հավելված
Գյումրի համայնքի ավագանու
2014թ. դեկտեմբերի 12 -ի
N 173 -Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

12 դեկտեմբերի 2014 թվական, սկիզբը՝ ժ. 12:00

1.ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 134-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)**

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 134-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)**

4. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ 4 -ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 24/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԼԻԱՆԱ ԵՐԵՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)**

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)**

6. 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)**

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 23 (ՔՍԱՆԵՐԵՔ) ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)**

8. ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՈՆԱԿԱՆ ՋԱՐԴԱՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

9. «ԱՄԱՆՈՐԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԶԻ (ԳՈՐԿՈՒ) ՓՈՂՈՑԻ N 30 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ «ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

11. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 99-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 153-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԻ ՇԵՆՔԸ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՐՁԱՆԸ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

18. ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N144-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

22. <<ԱՐՄԻՆԵ>> ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

23. <<ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ>> ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԲԵՐ ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

25. ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

26. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 139 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԻՆԸ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

27. ՀԱՄԼԵՏ ՏՈՆՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

29. ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՍՈՒՐԲ ՅՈԹ ՎԵՐՔ ԵԿԵՂԵՑՈՒ <<ԲԱՐԵԳՈՐԾԱՍԿԱՆ ՋՈԿԱՏԻՆ>>ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԵՐԵՐԻ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏՈՒՄ, ՄԱՆԿԱՏՆԵՐՈՒՄ, ՀԱՏՈՒԿ ԽՆԱՄՔԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

31.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄԱԴՐԱՄԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

32.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.

Հավելված՝
Գյումրի համայնքի ավագանու
2014թ. դեկտեմբերի 12-ի
N 174-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքերի դրույքաչափեր

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝նոր շենքերի, շինությունների(ներառյալ ՝ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար,

3) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

5) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

6) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար,

7) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

8) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտներիվերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտբություն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակությոան փոփոխություն՝ **3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակությոան

փոփոխություն, ապա , բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն բաժնի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի կամ շենքերի շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ստորգետնյա)շինարարություն կամ սենքերի գործառական նշանակությոան փոփոխությոուն ,ապա, որոշման իմաստով,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն բաժնի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է **5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **12500 (տասներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **12500 (տասներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:**

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ **200 (երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **9000 (ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ.**

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **1500 (մեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:**

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առևտրի առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

7. Համայնքի ավագանու կողմից սահմանված համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ **100 (մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ **1250 (մեկ հազար երկու հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) մեկ շաբաթվա համար՝ **2500 (երկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) մեկ ամսվա համար՝ **12500 (տասներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

5) մեկ տարվա համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ **75000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **150000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) բաղնիքների (սաունաների) համար՝ **300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) խաղատների կազմակերպման համար՝ **1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ,**

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ **500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ **200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2500 (երկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **4000 (չորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) այլ արտաքին գովազդի համար՝ **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մինչև ներառյալ երկու թերթերի համար՝ **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**, երեքից ներառյալ հինգ թերթերի համար՝ **2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**, վեցից ներառյալ տաս թերթերի համար՝ **3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**, տասնմեկ և ավելի թերթերի համար՝ **5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 174 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 134-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ հոդվածներով, 9-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածով, 11-րդ հոդվածի 1-ին մասով, <<Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2015 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի,
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2014 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 134-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Տեղական վճարների դրույքաչափեր

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է **10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2. Գյումրի քաղաքի վարչական տարածքում ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական վճարը սահմանվում է՝

1) մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների , ոչ հիմնական շինությունների տեղադրման, ինչպես նաև մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար,

3) 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **35000 (երեսուն հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

5) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

3. Գյումրի քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ **15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

4. Գյումրի քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար վճարը սահմանվում է՝ **30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

5. Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառուցապատողների միջոցներով շինարարական աշխատանքներ իրականացման ընթացքում, օբյեկտների հարակից տարածքներում և փողոցներում սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու նպատակով, շինարարության թույլտվություն ձեռք բերելու ժամանակ գանձվող տեղական վճարը սահմանվում է՝

1) պետական կամ պետականին հավասերացված ծրագրերի համար՝ կապալի պայմանագրային գնի 0.1% - ի չափով,

2) այլ կառուցապատողների համար,

3) նախահաշվային փաստաթղթեր ներկայացնելու դեպքում՝ նախահաշվային արժեքի 0.1% - ի չափով,

4) նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքներիտեսակներ» արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուի համաձայն հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի 0.1% - ի չափով:

6. Համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանվում է **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**